ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան 10 » 11 2017թ. № 1078-Ա

«ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Արմսերտ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին և փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի հավելվածում նշված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:

2. «Արմսերտ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին և փորձարկման լաբորատորիային նշանակել 3 տարի ժամկետով՝ մինչև 2020 թվականի հունիսի 29-ը:

3. «Արմսերտ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին տրամադրել Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ N-17 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-17(Н-17)2017:

4. «Արմսերտ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային տրամադրել Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ N-18 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-18(Н-18)2017:

5. «Արմսերտ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին և փորձարկման լաբորատորիային գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2017թ.
---------- ի N ----Ա հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «Ռադիոսարքավորումներ և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 2228-Ն որոշում

2. «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 004/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

3. «Տեխնիկական միջոցների էլեկտրական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ